ՀՀ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՆՅՈՒԹԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԴԵՊԱՐՏԱՄԵՆՏԻ ՊԵՏ

HEAD OF LOGISTICS SUPPORT DEPARTMENT OF MINISRTY OF DEFENCE OF THE REPUBLIC OF ARMENIA

НАЧАЛЬНИК ДЕПАРТАМЕНТА МАТЕРИАЛЬНО-ТЕХНИЧЕСКОГО ОБЕСПЕЧЕНИЯ МИНИСТЕРСТВА ОБОРОНЫ РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ

0044, ք.Երևան, Բագրևանդի փ.5
Email: depart@mil.am
Հեռ.՝ (+37410) 29-45-45
Ֆաքս՝ (+37410) 29-46-13

5 Bagrevand str., 0044 Yerevan
Ереван, 0044, Багреванд 5,
Email: depart@mil.am
Tel.Тел.: (+37410) 29-45-45
Fax.Факс: (+37410) 29-46-13

№ [illegible]/4974
"28" 12 2017թ.

«Դարֆ» ՍՊԸ-ի տնօրեն,
պարոն Գ. ԲԱԴԱԼՅԱՆԻՆ
հասցե՝ ք. Երևան, Ս. Վրացյան փ. 71-34
էլ. հասցեն՝ darf-llc@mail.ru
ՀՎՀՀ՝ 02609379

ՀՀ պաշտպանության նախարարության և «Դարֆ» ՍՊԸ-ի միջև 19.06.2017թ. կնքված N ՇՀԱՊՁԲ-4/7-3 ծածկագրով գնման պայմանագրի (այսուհետև՝ Պայմանագիր) համաձայն, Ձեր ընկերությունը պարտավոր էր ՀՀ պաշտպանության նախարարությանը մինչև 31.07.2017թ. մատակարարել 4 հատ համասեզոն նշանակության, 235/55R17 չափի, «VIATI V-237» անվանմամբ անվադողեր՝ 146000 (մեկ հարյուր քառասունվեց հազար) ՀՀ դրամ գնով և 2017թ. 3-րդ եռամսյակի ընթացքում մատակարարել 8 հատ 235/65R17 չափի, «Matador» ապրանքանիշի, «MP92 Sibir Snow Suv» անվանմամբ անվադողեր՝ 376000 (երեք հարյուր յոթանասունվեց հազար) ՀՀ դրամ գնով:

Հիմք ընդունելով Պայմանագրի 3.1.1 կետը՝ ՀՀ պաշտպանության նախարարությունը 2017թ. դեկտեմբերի 20-ին՝ միակողմանի մասնակի լուծում է վերը նշված պայմանագիրը՝ 4 հատ համասեզոն նշանակության, 235/55R17 չափի, «VIATI V-237» անվանմամբ անվադողերի և 8 հատ 235/65R17 չափի, «Matador» ապրանքանիշի, «MP92 Sibir Snow Suv» անվանմամբ անվադողերի մասով:

Տեղեկացնում եմ, որ «Դարֆ» ՍՊԸ-ն պարտավոր է սույն ծանուցումը ստանալուց հետո 5 (հինգ) բանկային օրվա ընթացքում ՀՀ ֆինանսների նախարարության կողմից բացված գանձապետական 900005028106 հաշվեհամարին փոխանցել՝ 25594 (քսանհինգ հազար հինգ հարյուր իննսունչորս) ՀՀ դրամ՝ որպես տույժ՝ մատակարարման ժամկետների խախտման համար (պայմանագրի 7.2 կետի

համաձայն) և 40930 (քառասուն հազար ինը հարյուր երեսուն) ՀՀ դրամ՝ որպես տուգանք՝ տեխնիկական բնութագրին չհամապատասխանող Ապրանք մատակարարելու համար (պայմանագրի 7.4 կետի համաձայն):

Միաժամանակ տեղեկացնում եմ, որ «Դարֆ» ՍՊԸ-ից կգանձվի նաև պայմանագրի կատարման ապահովման գումար՝ որպես պայմանագրի կատարման ապահովում (կնքված պայմանագրի ընդհանուր գումարի 10 %-ի չափով):

Հարգանքով՝

ՀՀ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ

ՆՅՈՒԹԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԴԵՊԱՐՏԱՄԵՆՏԻ ՊԵՏԻ ՊԺԿ

Կ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ